



Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
ԱԲ ավագ դպրոցի ընդունելության քննություններ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քննաթերթ՝ պատասխանների հնարավոր տարբերակներով

Քննաշրջան՝ 2017 թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե
Հավելյալ նյութ՝ Պատասխանների գրքույկ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԿ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել Պատասխանների գրքույկի կազմին գրված ցուցումներին:

Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:

Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:

Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:

Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է **8** տպագիր էջերից:

Հայոց պատմություն

Ուշադրություն. առանց շտապելու կարդացե՛ք և ուսումնասիրե՛ք բերված սկզբնաղբյուր-փաստաթղթերը: Պատասխանե՛ք հարցերին՝ հիմնավորելով տրված սկզբնաղբյուր-փաստաթղթերում առկա փաստերով: Ձեր հղումներում նշե՛ք, թե տեքստի որ տողերից եք (փակագծերում նշելով տողերի համարները) վերցրել Ձեր մոտեցումը հիմնավորող փաստարկները:

Փաստաթուղթ 1 (7 միավոր)

Այս տողերի հեղինակն իտալացի աշխարհահռչակ ճանապարհորդ է:

«Դուք պետք է իմանաք, որ կան երկու Հայաստաններ՝ Մեծ և Փոքր: Փոքր Հայաստանի թագավորը արդարությամբ է կառավարում իր երկիրը...

Նրանք ունեն մի քաղաք ծովի վրա, որ կոչվում է Լայացցո, որտեղ նրանք մեծ առևտուր են կատարում: Որովհետև դուք պետք է իմանաք, թե բոլոր համեմունքները և մետաքսյա ու արծաթյա կերպասները և ուրիշ արժեքավոր անոթները, որոնք գալիս են ներքին գավառներից, բերվում են այս քաղաքը: Վենետիկի, Ջենովայի և ուրիշ երկրների վաճառականները այստեղ են գալիս՝ վաճառելու իրենց ապրանքները և կամ գնելու՝ ինչ որ իրենք պետք ունեն: Եվ որևէ անձնավորություն, վաճառական կամ ուրիշ, որ պիտի ճամփորդի Արևելքի ներսերը, իր ճամփորդությունը սկսում է այս Լայացցո քաղաքից»:

Հարց ա.

Ո՞վ է այդ ճանապարհորդը և Փոքր Հայաստան անվանման տակ ո՞ր պետության մասին է նա հիշատակում:

Պատասխան – այդ հռչակավոր Ճանապարհորդը Մարկո Պոլոն էր, իսկ Փոքր Հայաստան նա անվանում էր Կիլիկիայի Հայկական թագավորությանը:

(Պատասխանին որպես հավելում: Բնականաբար, սույն հարցին պատասխանողը չպետք է շփոթի Փոքր Հայաստանը հայոց պատմության հին շրջանում գոյություն ունեցած Փոքր Հայքի թագավորության հետ՝ հիմնվելով սկզբնաղբյուրի վրա, որտեղ հիշատակվում են Վենետիկի և Ջենովայի երկրները, որոնք որպես առանձին երկրներ Փոքր Հայքի ժամանակ գոյություն չունեին և մտնում էին Հռոմեական կայսրության կազմի մեջ):

Հարց բ.

Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էր այդ պետությունում առևտուրն այդպես զարգացած:

Պատասխան – Հիմնվելով սկզբնաղբյուրում առկա հետևյալ փաստերի վրա, ըստ որոնց Կիլիկյան Հայաստան էին գալիս Վենետիկի, Ջենովայի և այլ երկրների վաճառականները, այստեղ վաճառում և գնում էին տարաբնույթ ապրանքներ, որոնք բերվում էին հեռավոր երկրներից, ավելին, այնտեղ նշվում է, որ բոլորը, ովքեր ցանկանում էին գնալ Արևելքի խորքերը պետք է անցնեին Կիլիկիայի Լայացցո քաղաքով, Կիլիկյան Հայաստանում առևտրային հարաբերությունները խիստ զարգացած էին: Եվ, եթե

առևտուրը Կիլիկյան Հայաստանում այսպես զարգացած էր, ապա հետևում է, որ առևտրի հետ պետք է զարգացած լինեին նաև արհեստները և գյուղատնտեսությունը, որպեսզի ապահովեին նման պահանջարկը: Միջազգային և ներքին առևտրի նման բարձր զարգացվածությունը պահանջում էր նաև պետական որոշակի հաստատությունների, օրինակ՝ ֆինանսական, մաքսային և իրավական կառույցների առկայություն, առանց որոնց հնարավոր չէր լինի կարգավորել այդ ամբողջ գործընթացները: Այսպիսով այս ամենով կարելի է որոշակիորեն հիմնավորել, որ Կիլիկյան Հայաստանում տնտեսական հարաբերությունները բավական բարձր զարգացվածության մակարդակի վրա էին գտնվում:

Փաստաթուղթ 2 (6 միավոր)

Ստորև Հայ քաղաքական առաջին կուսակցություններից մեկի զինանշանն ու ծրագրից մի հատվածն են:



«Կռիվ մղել միապետական կարգերը տապալելու համար և դրանք փոխարինել հանրային, ռամկավարական, սահմանադրական կարգերով: Պետք է բռնի կերպով կերպարանափոխել, հեղաշրջել ներկա հասարակական կազմակերպությունը Թուրքաց Հայաստանում, կռիվ մղելով թուրք տերության դեմ՝ ժողովրդային ընդհանուր ապստամբության միջոցով»:

Հարց ա.

Դատելով նկարից, ի՞նչ եք կարծում, ո՞ր կուսակցության մասին է խոսքը (նշե՛ք կուսակցության ամբողջական անվանումը):

Պատասխան – Եղել են հայ ազգային-քաղաքական երեք կուսակցություններ՝ Արմենական, Հնչակյան և ՀՅԴ, որոնք հիմնադրվել են համապատասխանաբար՝ 1885, 1887 և 1890 թթ.: Նկարում առկա է 1887 թ., ուստի խոսքը Հնչակյան կուսակցության մասին է: Նկարում գրված է ՄԴՀԿ, որը Հնչակյան կուսակցության ամբողջական անվանման հապավումն է, իսկ այդ անվանումն է Սոցիալ Դեմոկրատական Հնչակյան կուսակցություն:

Հարց ք.

Պատելով տեքստից, ի՞նչ եք կարծում, քաղաքական-հասարակական ինչպիսի՞ կարգի կողմնակից է այդ կուսակցությունը:

Պատասխան - Անդրադառնալով տեքստում առկա հետևյալ արտահայտությանը՝ «Կռիվ մղել միապետական կարգերը տապալելու համար և դրանք փոխարինել հանրային, ռամկավարական, սահմանադրական կարգերով» սույն կուսակցությունն ունի քաղաքական-հասարակական սոցիալիստական ուղղվածություն: Նաև հիմնվելով այն փաստի վրա, որ կուսակցությունը դավանում էր իր նպատակներին հասնել հեղափոխական միջոցներով, ապա նրան կարելի է ներկայացնել որպես քաղաքական ծայրահեղական ուժ:

Փաստաթուղթ 3 (6 միավոր)

Ստորև խորհրդային Հայաստանում այլախոհ հայտնի գործչի գրքից մի հատված է:

1964 թվականի օգոստոսից մինչև 1967 թ. մայիսը Հայաստանում քաղաքական դատավարություններ գրեթե չեն ընթացել: Պատճառը, թերևս, այն էր, որ ընդհատակյա և կիսաընդհատակյա զարգացումները տեղավորվում էին իշխանությունների նախանշած թույլատրելիության սահմաններում: Դրանք, որպես կանոն, կրում էին ընդգծված հայրենասիրական բնույթ և չէին հակադրվում խորհրդային իշխանություններին: Սակայն 1965 թ. ապրիլին կայացած ցույցը գլխավայր շրջեց ամեն ինչ, ջարդեց բազմաթիվ տաբուներ: Այդ ցույցից հետո հանրությունը, հատկապես քաղաքական այլախոհական պայքարի մեջ ընդգրկված մարդիկ սկսում են գիտակցել, որ կարելի է և կարող են հակադրվել գործող կարգերին, որ հազարավոր մարդիկ պատրաստ են դուրս գալ փողոց և իշխանություններին ստիպել նահանջել:

Հարց ա.

Ի՞նչ ցույցի մասին է խոսում հեղինակը և ինչո՞ւ էր այն կազմակերպվել Երևանում հենց 1965 թվականին:

Պատասխան – Հիմնվելով նշված այն փաստի վրա, որ ցույցը կազմակերպվել էր 1965 թ. ապրիլին, այն կարող էր կազմակերպված լինել Ցեղասպանության 50 ամյակի կապակցությամբ՝ 1915-1965 թթ., ինչն էլ ազգային նման հուզումներ էր առաջացրել խորհրդային Հայաստանում:

Հարց ք.

Ի՞նչ եք կարծում, ինչո՞վ կարող էր այդ ցույցը հակադրվել խորհրդային կարգերին:

Պատասխան – Վերլուծելով փաստերը (նախ, որ ցույցը ազգային մղումների հիմքի վրա էր, կազմակերպվում էին այլախոհական, ընդհատակյա կազմակերպություններ), որոնք առկա են տեքստում, նման գործընթացները կարող էին խթանել ազգային գիտակցության բարձրացմանը միտված որոշակի շարժումներ, որոնք կարող էին տարածվել այլ հանրապետություններում, ինչն էլ ի վերջո կհանգեցներ ԽՍՀՄ փլուզմանը:

Համաշխարհային պատմություն

Առաջադրանք 4 (6 միավոր)

Աղբյուր 1

Ստորև Հռոմի պապ Ուրբանոս Բ-ի Կլերմոն քաղաքի տաճարում ունեցած ելույթից մի հատված է.

«Երուսաղեմի սահմաններից և Կոստանդնուպոլսից կարևոր տեղեկություններ են հասել այն մասին, որ անհավատները ներխուժել են նրանց երկրներ, կողոպտել, այրել, իսկ Աստծո տաճարները կամ հիմնահատակ ավերել, կամ հարմարեցրել են իրենց կրոնական ծեսերի համար: ... Մեր Փրկչի, մեր Տիրոջ սուրբ գերեզմանին այժմ անհավատներն են տիրում... Երկիրը, որտեղ բնակվում եք, այժմ նեղ է ձեր բազմամարդության պատճառով. հարստություններով այն առատ չէ և հազիվ է հաց հասցնում իր մշակների: Դրա համար էլ դուք խժռում եք միմյանց, պատերազմներ մղում ու մահացու վերքեր հասցնում: Այժմ կարող է դադար առնել ձեր ատելությունը. կհանդարտվեն կռիվները և կնիրհի երկպառակությունը: Ծամփա՝ ընկեք դեպի սուրբ գերեզմանը, խլե՛ք այդ երկիրն անհավատներից և ձե՛րը դարձրե՛ք: Ով այստեղ տխուր է և աղքատ, այնտեղ կլինի ուրախ և հարուստ: Այդ հողում, ինչպես Սուրբ գրքում է ասված, մեղր և կաթ է հոսում: Երուսաղեմը երկրիս ամենաբարեբեր հողն է: Այն, կարծես, երկրորդ դրախտը լինի: Եվ այդ արքայավայել քաղաքն ազատագրման է սպասում... Նա, ով կմեկնի Երուսաղեմ Տիրոջ գերեզմանը փրկելու, կազատվի բոլոր պարտքերից ու մեղքերից, իսկ ով կզոհվի՝ դրախտի հավերժ երանությանը կարժանանա»:

Հարց ա.

Պապի այս խոսքերը ի՞նչ արշավանքներ հրահրեցին, և ե՞րբ են այդ արշավանքները տեղի ունեցել:

Պատասխան - Ուրբանոս Բ-ի խոսքերը հրահրեցին խաչակրաց արշավանքների սկիզբը: Խաչակրաց առաջին արշավանքը տեղի է ունեցել 1096-1099 թթ.: Եղել են այլ խաչակրաց արշավանքներ ևս, օրինակ Երրորդ խաչակրաց արշավանքը (1189-1192 թթ.) և Չորրորդը, որի ժամանակ 1204 թ. խաչակիրները գրավեցին Արևելյան հռոմեական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը:

Հարց բ.

Օգտագործելով ձեր գիտելիքները և աղբյուրի տեղեկությունները՝ բացատրե՛ք, թե որոնք էին այդ արշավանքների պատճառները: Ձեր կարծիքով՝ այդ արշավանքները հաջողված էին, թե՞ ձախողված. հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

Պատասխան - Առաջին խաչակրաց արշավանքի հիմնական պատճառներից է Երուսաղեմի գրավումը թուրք սելջուկների կողմից, որոնք, ի լրումն, սկսել էին խոչընդոտել ուխտագնացների այցելուցությունը քրիստոնեական սրբավայրեր: Ուստի արշավանքի հիմնական նպատակներից մեկը «անհավատներից» Հիսուս Քրիստոսի գերեզմանը փրկելն էր, ինչի մասին խոսում է նաև Ուրբանոս Բ-ն իր ելույթում: Բացի այդ, Արևմտյան Եվրոպայում Արևելքը պատկերացնում էին որպես հարուստ և բարեբեր հող, որտեղ

«մեղր և կաթ է հոսում»: Շատերին թվում էր, որ Արևելքում գրավված հողերի և հարստությունների հաշվին իրենց կյանքը կբարելավվի և խնդիրները կլուծվեն: Պապը նաև նշում է. «Նա, ով կմեկնի Երուսաղեմ Տիրոջ գերեզմանը փրկելու, կազատվի բոլոր պարտքերից ու մեղքերից, իսկ ով կզոհվի՝ դրախտի հավերժ երանությանը կարժանանա»: Պապի այս խոստումը շատ գրավիչ էր հնչում միջնադարյան Արևմտյան Եվրոպայի բնակչության ամենատարբեր շերտերի համար՝ սկսած գյուղացիությունից մինչև ասպետներ: Զրիստոնյայի համար բավականին ծանրակշիռ էր նաև մահից հետո դրախտում հայտնվելու հույսը: Նաև, արշավանքների միջոցով կաթոլիկ եկեղեցին ցանկանում էր իր ազդեցությունը տարածել Արևելյան եկեղեցիների վրա:

Արշավանքները ձախողված էին, քանի որ դրանք հիմնականում չհասան այն նպատակներին, որոնց համար ձեռնարկվել էին: Ծիշտ է, Առաջին արշավանքի ժամանակ հաջողվեց գրավել Եդեսիան (1098), Երուսաղեմը (1099), սակայն հետո երկուսն էլ հետ նվաճվեցին մահմեդականների կողմից: Ավելին, Չորրորդ խաչակրաց արշավանքի ժամանակ քրիստոնյա խաչակիրները գրավեցին և ավերեցին քրիստոնյա պետության՝ Արևելյան հռոմեական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը: 1291 թ. խաչակիրները կորցրեցին իրենց վերջին հենակետը՝ Ակրան: Նշվածի հիման վրա, ես կարծում եմ, որ արշավանքները ձախողվել են:

Կարծում եմ, որ խաչակրաց արշավանքները որոշ չափով հասել են իրենց նպատակին, ուստի դրանք կարելի է համարել հաջողված: Ամենահաջողվածն Առաջին արշավանքն էր, որի ժամանակ խաչակիրները գրավեցին Երուսաղեմը: Բացի դրանից, Արևելքում հիմնվեցին խաչակրաց պետություններ և հոգևոր-ասպետական միաբանություններ: Դրանք մեծ դեր կատարեցին Սուրբ երկրի, ինչպես նաև սրբավայրեր այցելող ուխտավորների պաշտպանության հարցում: Նշենք նաև 1192 թ. Սալահ ադ Դինի և Ռիչարդ Առյուծասրտի միջև կնքված պայմանագիրը, որը ուխտավորներին հնարավորություն էր տալիս անարգել այցելել սուրբ վայրեր: Խաչակրաց արշավանքները նաև նպաստեցին Արևելք-Արևմուտք կապերի սերտացման, մշակութային արժեքների փոխներթափանցմանը: Այս պատճառներից ելնելով՝ դրանք կանելի է հաջողված համարել:

Առաջադրանք 5 (7 միավոր)

Ստորև համաշխարհային պատմության մի դասագրքից մեջբերում է 1919 թ. հունիսի 28-ին կնքված Վերսալի պայմանագրի վերաբերյալ.

Աղբյուր 1.

«Չնայած իր ունեցած առարկություններին՝ Գերմանիան չունեւր այլընտրանք և պետք է ստորագրեր այդ պայմանագիրը: Պայմանագրի համաձայն նա կորցրեց մոտ 70 հզ. կմ տարածք, այդ թվում իր գաղութները: Բացի տարածքային կորուստներից՝ պայմանագիրը պարունակում էր նաև այլ ստորացուցիչ կետեր. գերմանական զորքերի թիվը չէր կարող գերազանցել 100.000-ը, Գերմանիան չէր կարող ունենալ տանկեր, ռազմական օդուժ և սուզանավեր, ռազմանավերի թիվը չէր կարող գերազանցել վեցը: Արգելվում էր Գերմանիայի և Ավստրիայի միավորումը՝ երկու գերմանախոս երկրների միավորումը այլ ազգերի անվտանգության համար վտանգավոր համարելով: Մյուս պայմանը Գերմանիայի կողմից պատերազմի սանձազերծման մեղքի ընդունումն էր: Այն մեղադրում էր Գերմանիային ու նրա դաշնակիցներին պատերազմի հրահրման մեջ և հնարավորություն էր տալիս

հաղթած պետություններին՝ նրանցից պահանջել փոխհատուցում պատերազմի հետևանքով կրած վնասների համար»:

Հարց ա.

Ներկայացրեք՝ ձեր կարծիքով Վերսալի պայմանագիրը որքանով էր ապահովում խաղաղության և կայունության պահպանումը հետագայում: Բացատրեք և հիմնավորեք պատասխանը՝ օգտագործելով աղբյուրի տեղեկությունները և ձեր գիտելիքները:

Պատասխան - Փարիզի վեհաժողովը գումարվեց հավերժական խաղաղություն կնքելու կարգախոսի ներքո, բայց պարտված պետությունների հետ կնքված պայմանագրերը, մասնավորապես Վերսալի պայմանագիրը պարունակում էր կետեր, որոնք վտանգում էին խաղաղության պահպանումը ապագայում: Գերմանիան, որն է մասնակցություն չունենալով Վերսալի պայմանագրի կետերի մշակմանը, պայմանագիրը համարում էր իրեն պարտադրված և անարդարացի: Պայմանագրի կետերը գերմանացիների մոտ առաջացնում էին ուսանելի զգացողություն, որն այդքան հմտորեն օգտագործվեց Ա.Հիտլերի կողմից: Այս վերաբերմունքին առավել քան նպաստում էր «պատերազմի սանձազերծման» մեղքի ընդունումը և պատերազմում պատճառած վնասների փոխհատուցումը: Գերմանիան հետագա տարիներին չէր կարողանում վճարել փոխհատուցման սահմանված գումարը, ինչը տնտեսական խնդիրներ էր առաջացնում ոչ միայն իր երկրում, այլև հաղթած պետություններում, որոնք էլ իրենց հերթին չէին կարողանում վճարել պատերազմի ընթացքում կուտակված արտաքին պարտքերը ԱՄՆ-ին: Խնդիրը ժամանակավորապես կարգավորվեց Գերմանիայի տնտեսության մեջ ԱՄՆ-ի ներդրումների ծրագրի շնորհիվ, բայց 1929 թ. ծավալված Տնտեսական մեծ ճգնաժամի հետևանքով այս ներդրումները դադարեցին, ինչը կրկին շղթայական ներգործությամբ աղետալի ազդեցություն ունեցավ ոչ միայն Գերմանիայի, այլև հաղթած պետությունների տնտեսության վրա: Այս ամենը նպաստավոր պայմաններ ստեղծեց Գերմանիայում նացիոնալ-սոցիալիստական կուսակցության և նրա առաջնորդ Ա.Հիտլերի իշխանության գալու համար: Պայմանագրով Գերմանիան զրկվեց ոչ միայն իր գաղութներից, այլև մինչ պատերազմը իր անմիջական մաս կազմող որոշ տարածքներից: Ավելին, արգելվեց Գերմանիայի և Ավստրիայի միավորումը: Իշխանության գալուց հետո Հիտլերը 1935-1938 թթ. քայլեր ձեռնարկեց այդ կորուստները վերադարձնելու ուղղությամբ, մասնավորապես բռնակցեց Ավստրիան:

Ստորև ներկայացված աղբյուրներում Վերսալի պայմանագրի վերաբերյալ երկու հակադիր դիրքորոշումներ են արտահայտված: Աղբյուր 2-ը այն համարում է անարդար, Աղբյուր 3-ը՝ արդարացի: Կարդացեք աղբյուրները և պատասխանեք տրված հարցին:

Աղբյուր 2.

«Պատմագետը, արդարև, կեզրակացնի, որ մենք հիմար էինք: Ես կարծում եմ՝ մենք իսկապես հիմար էինք: Մենք ժամանեցինք Փարիզ այն համոզմունքով, որ նոր կարգ է հաստատվելու: Մենք հեռացանք Փարիզից՝ համոզված, որ այդ նոր կարգը միայն ապականեց հինը: Մենք եկանք վճռականությամբ, որ արդար և իմաստուն խաղաղություն ենք քննարկելու, հեռացանք՝ գիտակցելով, որ մեր թշնամիների հետ կնքված պայմանագրերը ոչ արդար էին, ոչ էլ իմաստուն: Կարդալով գերմանացիների կողմից պայմանագրի քննադատությունը՝ չես կարող տպավորություն չստանալ, որ

Փարիզի խաղաղության վեհաժողովը մեղավոր է նրանում, որ Վիլսոնականության ներքո քողարկել է իմպերիալիզմը»:

Աղբյուր 3.

«Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպիսի խաղաղության պայմանագիր էր սպասվում Քառյակ դաշինքի պետություններին, եթե նրանք տանուլ տային այս պատերազմը, ինչպես նաև վկայում է, թե ինչքան անամոթ են Գերմանիայի բողոքները Վերսալի պայմանագրից, որը բոլոր առումներով ավելի մեղմ էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրի համեմատ»:

Հարց բ.

Ո՞ր դիրքորոշումն է ձեզ համար ավելի ընդունելի: Բացատրեք և հիմնավորեք ձեր պատասխանը՝ օգտագործելով աղբյուրների տեղեկությունները և ձեր գիտելիքները:

Պատասխան - Պայմանագիրը արդարացի էր, քանի որ Գերմանիան 1914 թ. օգոստոսի 1-ին պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, և այս իրադարձությունը Առաջին աշխարհամարտի սկիզբ հանդիսացավ, որն էլ իր հերթին աննախադեպ մարդկային և նյութական կորուստներ պատճառեց: Արդարացի է, որ նա պետք է փոխհատուցեր այդ վնասները: Աղբյուր 2-ում նշվում է 1918 թ. մարտի 3-ին Գերմանիայի և Ռուսաստանի միջև կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագրի մասին: Սա Առաջին աշխարհամարտի ընթացքում միակ պայմանագիրն է, որ Գերմանիան կնքել է որպես հաղթող կողմ ծանրագույն պայմաններ առաջադրելով բոլշևիկյան Ռուսաստանին: Դրանից ելնելով, կարելի է ենթադրել, թե ինչպիսին կարող էին լինել պայմանագրերը, եթե Գերմանիան հաղթեր:

Կարծում եմ պայմանագիրն անարդար էր: Փարիզի վեհաժողովը հրավիրվեց համընդհանուր խաղաղություն հաստատելու վճռականությամբ, մինչդեռ կնքված պայմանագրերը, այդ թվում Վերսալի պայմանագիրը բազմաթիվ կետեր էին պարունակում, որոնք ոչ միայն ռեանշի զգացողության, այլև սպազա հիմնախնդիրների հիմք կարող էին հանդիսանալ: Ինչպես նշում է Աղբյուր 3-ը, Վիլսոնի 14 կետերը այլ սկզբունքներ էին առաջադրում խաղաղության հաստատման համար: Անարդար էր Առաջին աշխարհամարտի սանձազերծման մեղքը դնել Գերմանիայի վրա՝ նրանից հսկայական փոխհատուցում պահանջելով: Նույնը Վիլսոնը ասել է, որ պատերազմը սկսվել է ոչ թե մեկ պատճառից, այլ բոլոր պատճառներից միաժամանակ: Ուստի, ես կարծում եմ, որ որևէ մեկ երկիր չէր կարող մեղադրվել և պատժվել պատերազմի սանձազերծման համար: